ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ - վաճառք

ԼՈՏ-ի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը՝ քմ	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը /դրամ/
Լոտ 1 /ՔՀ-26/	ք. Դիլիջան, Կալինինի փ. 183/1	11-003-0137-0004	29,0	Բնակավայրերի հող	հասարակական նշ. օբյեկտի կառուցման	չկան	առկա է	առկա են մինչև 50մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	3 100 000
Լոտ 2 /ՔՀ-26/	ք. Դիլիջան, Շամախյան փ. 156/4	11-003-0003-0032	200,0	Բնակավայրերի հող	հասարակական նշ. օբյեկտի կառուցման	չկան	գրունտային ճանապարհ	առկա են մինչև 100մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	3 200 000

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի ելակետային տվյալներին և հատակագծին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնում՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է Դիլիջանի համայնքապետարան ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի՝ 50000 դրամի մուծման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, Դիլիջանի համայնքապետարանի շենք, 2-րդ հարկ:

Աճուրդը կայանալու է 2026թ. ապրիլի 27-ին ժամը 11.00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2026թ. ապրիլի 21-ը, ժամը 18.00: